

Փոս

Յուշերու Շարքէն – Մելգոնեանի Ամառանոցը Եւ... Փոս

01.09.2017 10:36



ՎԱՐԴԱՆ ԹԱՇՃԵԱՆ

Կար ատեն մը, շատ տարիներ առաջ, երբ ամէն ուսումնական տարեշրջանի աւարտին, Մելգոնեանի գիշերօթիկի կեանքը իր շարունակութիւնը կը տեսնէր ամառանոցներու մէջ, մինչեւ վերամուտ, առ ի դիւրութիւն ուսանողութեան մեծամասնութեան, երբ չգոյ էին երթելէկի այսօրուան հնարաւորութիւնները եւ հարկաւ անբաւարար՝ նիւթական պայմանները, որքան ալ որ կիզիչ բնոյթ կրէր ծնողք-գաւակ զիրար տեսնելու մարմաջը, ամիսներ տեւող բաժանումէ մը ետք: Եւ դարձեալ ծովեր ճեղքող նամակներուն կը վիճակուէր փոխադարձ այդ կարօտը մեղմելու միտքաւորութիւնը:

Մեր առաջին տարին սակայն եղաւ նաեւ վերջի՛նը այս ճամբարային դրութեան: Անկէ ետք ա՛լ աշակերտութիւնը կը դրկուէր տուն, ինչ ալ ըլլային պարագաները:

Քորրատօ»

Նստած, ձախէն աջ՝

Ժիրայր Մակարեան, Արթօ Աւետիսեան, Արայ Գալայճեան

Ոտքի, ձախէն աջ՝

Հայկազ Ազատեան, Սօսի Աւետեան, Վերգինէ Մալեան-Միսիրեան, Աւետիս Մանուկեան





Գագոբեթրիայի բարտիներու շուքին, 1954 ամառ

«Չարշըլը Արթին Աղա»

Դերակատարներու խումբ

Գլխավոր դերերով նկարին մէջ կ'երեւան՝ Ժիրայր Մակարեան, Արաքսի Կոստանեան, Ռիթա Սիմոնեան-Պալեան, Արայ Գալայճեան, Զաւէն Ղարիպեան, Պենոն Գույումճեան-Սեւան, Գեորգ Կարապետեան, Յակոբ (Ճէք) Հաճընեան, Յովհաննէս Գարագաշեան, ինչպէս նաեւ կեղորոնը՝ Տիկ. Սիրվարդ Պարսումեան-Սարաֆեան:

Աջին, ծայրը կեցող ճերմակ շապիկով, սեւ վարդակապով եւ ձեռնածալ մանչը Վարդան Թաշճեանն է (յօդուածագիրը):

Կիպրոսի Թրոտոս լեռներու լանջին, դալարագեղ երեք բլուրներու ծոցին մէջ պարփակուած հմայիչ գիւղ մըն է Գագոբեթրիան, տանիքներու գորշ կղմինտրին եւ ծառերու պռոտ կանաչին միաձուլումով ստեղծուած ներդաշնակութեան մը մէջ, մայր եկեղեցիի տիրական ներկայութեամբ ու դէպի Թրոտոս մագլցող մայրուղիին աջ կողմը պարզուող գեղանկարչային գրաւչութեամբ: Հակառակ ժամանակի սահանքին հետ կորսնցուցած իր անցեալի պարզութեան եւ անմեղութեան ու հետզհետէ զբոսաշրջիկային արդիական տարազ հագած նորաձեւութեան, գոհար այս գիւղին կեղրոնական ճամբան կը պահէ դեռ իր ինքնուրոյն գեղեցկութիւնը, պատմութիւնը, ժողովրդականութիւնը: Գլխավոր հրապարակին մօտ, վերի ձիւներէն կազմուած երկու ապակեգոյն գետակներ զիրար կը համբուրեն պատմական


կամուրջին ճիշդ տակը եւ գիրկընդխառն միահամուռ խշշոցով կը խուժեն վար, ճեղքելով գիւղն ու իր ծառաստանները, ի վերջոյ կեր հասցնելու ամբարտակի մը ձուկերուն: Բնութեան քերթողական ստեղծագործութիւն մը, որ անկուշտ կը պահէ կամուրջէն դիտող եւ զմայլող ոեւէ զգայուն սիրտ:

Ահա այս գիւղէն քանի մը քիլոմէթր աւելի վեր, Այ. Նիքոլա կամ Այ. Աննա պուրակներու գիրկին կը կառուցուէր ամառնային «վրանաքաղաք»ը, տեղացի թռչուններուն գեղգեղանքին, բարտիններու խարշափին եւ ձորէն հոսող գետակի զլլանքին խառնելով Մելգոնեանի պարման-պարմանուհիներուն ոչ նուազ անմեղունակ կանչերը: Խորտուբորտ ընդարձակ տարածութեան մը մէջ կը լարուէին տասէն աւելի հսկայ վրանները՝ տղոց, աղջկանց, ուսուցիչներուն, ինչպէս նաեւ ճաշարան-սերտարանին համար: Այլ կառոյցներ էին լուացարանները, ճէմիշները եւ բացօթեայ բեմը: Ջուր եւ ելէկտրականութիւն կը հայթայթէր գիւղապետութիւնը: Կարճ հեռավորութեան վրայ կը գտնուէր նաեւ բոլորին սիրելի աւազանը, որուն պաղ ջուրը կը փայփայէր իգական եւ արական մարմինները, տարբեր ժամերու հարկաւ...

Ամառնային կեանքը լեցուն կ'ըլլար միշտ: Ամէն առտու, նախաճաշէն եւ անոր յաջորդող կարճ դադարէն ետք, նոյն վրանին տակ կը սկսէր սերտողութեան պահը: Մելգոնեանի հարուստ մատենադարանին մէկ մասը հոն փոխադրուած ըլլալով, աշակերտները մի քանի ժամ կը զբաղէին ընթերցանութեամբ եւ կամ մուսաներով սնանողներուն համար՝ քերթուածներ ու արձակ էջեր հիւսելով, շուրջի բնութեան կամ սիրահարի մը մասին, հայերէն լեզուի մեր «Օշականեան» ուսուցչին՝ Պրն. Ն. Թամամեանին գնահատական ժպիտին արժանանալու յոյսերով:

Երեկոյեան ժամերը կը հարստանային գրական, երաժշտական, ընկերային, թատերական եւ արի-արենուշական ձեռնարկներու կազմակերպումով: Օրինակի համար՝ Օտեան-Կիրճեանի «Չարշըլը Արթին Աղա» կատակերգութեան եւ Ճիաքումէթիի «Քորրասո» տրամախօսութեան երկու յաջող բեմադրութիւնները, կարճ ժամանակի մը մէջ, յիշատակելի պահեր պարգեւեցին բոլորին: Տակաւին՝ խարուկահանդէս, Ջուարթ երեկոյ, մրցանքներ, արշաւներ, մարզական խաղեր եւ այլ գործունէութիւններ ներքին կեանքին կու տային ճարճատուն վիճակ, «ձանձրոյթ»ը դարձնելով անձանօթ բառ: Եւ վերջապէս՝ կա՛ր Մելգոնեանցիին յատուկ ճեմելու պահը, տղայ-աղջիկ երբեմն միասին «Շատ մը սերերու արշիպեղագոս» այդ մթնոլորտին մէջ, միշտ սակայն հերթապահներուն խուզարկու աչքերը եւ բարակ ջիղերը հանդարտ պահող բաղձալի կարգապահութեան մը սահմաններէն ներս:

Իսկ աւելի ուշ, երբ աստղերը սկսէին պսպղալ այդ չոր օդի մթագոյն կապոյտէն, աշակերտութիւնը կ'արտօնուէր շաբաթը անգամ մը իջնելու Գագոբէթրիայի բացօթեայ սինեման եւ վայելելու տարիքի պատշաճ ժապաւէն մը, թէեւ ամէն ֆիլմ յարմար էր դիտել այդ շրջանին, երբ չէին բուսած դեռ Հոլիվուտի այսօրուան գռեհկութիւններն ու վայրագութիւնները սպիտակ պաստառի վրայ: Այդ հաճոյքը սակայն մասամբ կը գեղչուէր, երբ անկէ ետք կիսախուփի եւ քնտա աչքերով ու դժկամ՝ պէտք էր կտրել վերադարձի ճամբան, դարձեալ հետիոտն, հասնելու համար վրաններուն: Ասիկա զիկ-զակ այն ճամբան էր, որուն երկու կողմի պտղատու ծառերը կը ցուցադրէին իրենց ձոխ բերքը, ծանրաբեռնուած ու



կորացած ճիւղերու վրայ: Յաճախ, գիւղ իջնող տղոց համար դժուար չէր փորձութեան ենթարկուիլ ու համտեսել եղանակի այդ թարմ պտուղները՝ տանձ, խնձոր, թուզ, խաղող այլ մանաւանդ՝ համեղ կեռասը, ինչ փոյթ թէ անոնց պակասը երբեք զգալի չէր ըլլար մեր ճաշացուցակին վրայ: Պահակի գաւազան, պոռչտուք, շունի հաջոց չէին սպառնար մեզի, որովհետեւ այք գոցող բաց հրաւեր մը կար տեղացիներէն, գեղջուկի ասանդական հիւրընկալութեան եւ համբերութեան խառնուրդ՝ գթառատ վերաբերում մը հանդէպ՝ ամառանոցի բնակիչներուս, «Արմէնէուս» (հայերուս), այսինքն՝ ճակատագրակից ժողովուրդի մը զաւակներուն...

Ամառնային այդ ամիսներուն, մերթ ընդ մերթ մեզի այցելութեան կու գային ականաւոր դէմքեր: Տնօրէն Դանիէլ Ոսկեանը Հաստատութեան ինքնաշարժով Նիկոսիայէն լեռ կը բերէր օրուան հիւրը կամ հիւրերը եւ կը պտըտցնէր վրաններուն շուրջ, արդար հպարտութեամբ, մինչ մեզի կը հրահանգուէր կարգի դնել ամէն բան, առաւելագոյն չափով տպաւորելու համար այցելուները:


Երեկոյեան, ընթրիքէն ետք, աշակերտութիւնը կը հաւաքուէր բացօթեայ բեմին առջեւ, երկար նստարաններու վրայ, պլանքէթներով փաթթուած՝ հետզհետէ ցրտող օդին դէմ ու կը հետեւէր հանդէսի գեղարուեստական յայտագրին, որուն եզրափակիչ բաժինը կը վերապահուէր օրուան հիւրի պատգամին:

Այսպիսի առիթով մը, բարեբախտութիւնը ունեցանք վայելելու ֆրանսահայ հանրաձայնօթ գրող Շաւարշ Նարդունիի ներկայութեան: Ծանօթ ըլլալով իր երկերուն, այս այցը յատուկ խանդավառութիւն ստեղծեց բանակավայրէն ներս:

Առտու մը, դեռ նոր բարձրացած լեռ, սերտարանի ընդարձակ վրանին տակ՝ խորասուզուած էինք մեզ շատ հետաքրքրող Բաֆֆիի եւ Ծերենցի պատմական վէպերուն եւ միւս կողմէն «Հառաչանքի կամուրջը», «Քամելիազարդ կինը» կամ «Գահ եւ սեր» թարգմանական երկերու ընթերցումին մէջ, մինչ անդին, քանի մը տասնեակ մէթր հեռաւորութեան վրայ կը լսուէր շինութեան մը շարունակական թախ-թախը: Հաստատութեան տարիներու ատաղձագործը, բլուրի լանջին, երկու-երեք աշակերտի օգնութեամբ կառուցելու վրայ էր ուսուցիչներու ճէմիշը: Ճէմիշ, որ առաստաղի կարիք չէր ունենար սովորաբար: Փորած էին խորունկ փոս մը, ու կը փորձէին կանգնեցնել շուրջի պատերը եւ դռնակը:

Յանկարծ զօրաւոր թխրտոց մը եւ անոր յաջորդող թանձր փոշին բոլորին այքերը դարձուց դէպի բլուր: Ուսուցիչ-աշակերտ բնագոյրաբար փութացինք օգնութեան: Ո՛ւշ էր: Վարպետը եւ օգնական տղաքը արդէն գլորած էին իրենց փորած փոսին մէջ, անձարակութեան մը իբր հետեւանք, ճէմիշի ապագայ պատերն ալ տապալելով իրենց վրան: Բարեբախտաբար վիրաւոր չկար, փոշին միայն...

Այո՛, փոս մըն էր, գոցուեցաւ, անցա՛ւ, վերք չպատճառեց:



Իր հիմնադրութեան օրէն, այլաբանական իմաստով տեսակաւոր փոսեր շատ տեսաւ Մելգոնեանը, մարտահրաւերներ, որոնք ատենին զոցուեցան, հարթուեցան, որովհետեւ տիրակա՛ն էր ոգին, միահամո՛ւտ կամքը եւ անվարա՛ն պայքարը բոլորին, ընդդէմ՝ Հաստատութեան մազի թելին դպչող ռեւէ վտանգի, իբրեւ բարոյական պարտաւորութիւն մեծ Բարերարներուն երազի եւ կտակի ճամբուն վրայ:

Հակառակ այս դժուարութիւններուն սակայն, երբեք անստոյգ չէր եղած հորիզոնը այս հաստատակոթող կառոյցին, ձմե՛ռ թէ ամա՛ռ: Հայ տոհմիկ շունչին անմահացումը հո՛ն էր: Կեա՛նք նորոգող, սի՛րտ բարախող, յոյսի կեդրոն սուրբ անունը՝ «Մելգոնեա՛ն»ը հո՛ն էր: Անոր լոյսը անհետացուցած էր խաւարը:

Մինչդէռ հիմա, ափսո՛ս, խաւա՛րն է անհետացուցած անոր լոյսը:

Ամէն անգամ որ անցած եմ Թրոտտուի ճամբէն, տեսած եմ Գագոբեթրիան, տուները՝ հոն, գետակը՝ հոն, բարտիները՝ հոն, բլուրները՝ հոն, բայց չէի տեսներ ալ վրանները, չէի տեսներ վառվառն տղաքն ու աղջիկները, չէի տեսներ...

Ու հիմա, ամէն անգամ որ կ'անցնիմ Նիկոսիոյ Լիմասոլ պողոտայէն, կը տեսնեմ տխրամած զոյգ շէնքերը հոն՝ են, անտառի ծառերը հոն՝ են, վիլլան հոն՝ է, Բարերարներու դամբանը հոն՝ է, բայց չե՛մ տեսներ ալ մարդկային կեանք եւ շարժում անոնց շուրջ: Կը լսեմ թոշուններուն ծիւ-ծիւր, ծառերուն սօսափը, հովերուն հարազատ համբոյրը, բայց չե՛մ լսեր ալ՝ «Անմահ Լուսոյ»ն, «Որքան Դիցակերտ»ը, «Հրեշտակ Զուարթուն»ը, «Իմ խենթ գարնան... հոգիս թեւաւոր»ը: Չեմ տեսներ ու չեմ լսեր այն ինչ որ անմոռանալիօրէն կը պայծառակերպուէր աչքերուս առջեւ, մտքիս մէջ, սրտիս վրայ, քանի որ, օ՛, ալ լրա՛ծ է դամբան նայող անցեալի հնչեղ զանգակը...

Ո՛վ կրնար երեւակայել, որ Թրոտտուի ճամբան եւ Լիմասոլի ճամբան, ճակատագրի անգութ խաղով պիտի նոյնանան օր մը, ամառնայիինի հետ ձմեռնային Մելգոնեանն ալ թաղելով սրտաճմլիկ լռութեան նոյն փոսին մէջ...

Այս փոսը մեր սրտի՛ փոսն է, վե՛րքն է եւ պիտի չզոցուի երբե՛ք, թե՛ Մելգոնեանցիին եւ թե՛ խղճամիտ ռեւէ հայու համար, որքան ատեն որ չեն բացուիր դեռ «Լուսոյ Տաճար»ին դռները ու խլրտած կը մնան պաշտելի Բարերարներուն աճիւնները, ուխտավա՛յր այդ դամբանին տակ, այսօր, տասներկու տարիներէ ի վեր:



Melkonian Forever